ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐ	Առաջարկություններ **CM/RecChL(2017)2**	11 մայիսի 2017 թվական

«Հայաստանի կողմից Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կիրառման վերաբերյալ» Նախարարների կոմիտեի CM/RecChL(2017)2 առաջարկություն

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2017 թվականի մայիսի 11–ին, նախարարների տեղակալների 1286–րդ նիստում)

Նախարարների կոմիտեն,

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 16-րդ հոդվածին համապատասխան,

հաշվի առնելով Հայաստանի կողմից 2002 թվականի հունվարի 25-ին ներկայացված վավերացման փաստաթուղթը,

հաշվի առնելով Հայաստանի կողմից Խարտիայի կիրառման մասով Փորձագետների կոմիտեի իրականացրած գնահատումը,

հաշվի առնելով, որ այս գնահատումը հիմնված է Հայաստանի կողմից իր չորրորդ պարբերական զեկույցում ներկայացված տեղեկությունների, Հայաստանի իշխանությունների կողմից ներկայացված հավելյալ տեղեկությունների, Հայաստանում օրենքով սահմանված կարգով ստեղծված մարմինների եւ ընկերակցությունների կողմից ներկայացված տեղեկությունների, ինչպես նաեւ Փորձագետների կոմիտեի կողմից իր աշխատանքային այցի ընթացքում ձեռք բերված տեղեկությունների վրա,

հաշվի առնելով Հայաստանի իշխանությունների կողմից Փորձագետների կոմիտեի զեկույցի բովանդակության վերաբերյալ արված մեկնաբանությունները,

առաջարկում է, որ Հայաստանի իշխանությունները հաշվի առնեն Փորձագետների կոմիտեի բոլոր դիտարկումներն ու առաջարկությունները, եւ որպես առաջնային խնդիր՝

1. խրախուսեն ասորերենի, հունարենի, քրդերենի եւ եզդիերենի գործածումը նախադպրոցական կրթության համակարգում եւ ընդլայնեն տարրական ու միջնակարգ մակարդակներում այս լեզուների դասավանդման շրջանակները՝ հատուկ ուշադրություն դարձնելով ուսուցիչների վերապատրաստմանը.

2. որդեգրեն պրոակտիվ մոտեցում հանրային կյանքում եւ մամուլում ասորերենի, հունարենի, քրդերենի եւ եզդիերենի պաշտպանության եւ խրախուսման հարցում.

3. ստեղծեն համապատասխան պայմաններ՝ հեռուստատեսությամբ եւ ռադիոյով ասորերենի, հունարենի, քրդերենի եւ եզդիերենի գործածումն ապահովելու համար.

4. ձեռնարկեն վճռական քայլեր ասորերենը, հունարենը, քրդերենը եւ եզդիերենը վարչական ու դատական մարմիններում գործածելու համար, ինչպես նաեւ ապահովեն համապատասխան համայնքներում աշխարհագրական անվանումների առկայությունը փոքրամասնությունների լեզուներով.

5. հատկացնեն համապատասխան ֆինանսական միջոցներ մշակութային գործունեության համար, ինչպես նաեւ ազգային փոքրամասնությունների ասոցիացիաներին՝ տարածաշրջանային եւ փոքրամասնությունների լեզուների խրախուսումն ապահովելու համար: